

տան, Կ. Պոլսոյ Հայոց Պատրիարքին իրաւաբանութեան տակ ըլլան, եւ ասոր հետ հպատակին Էջմիածնի Կաթողիկոսին՝ որ ի Հայս Ռուսաց<sup>175</sup> :

Ի վերջոյ կ'ուզենք հռոմէական եկեղեցւոյ հետ միացեալ Պուքովինայի Հայոց վրայ ալ քանի մը խօսք ըսել :

Միացեալ Հայք Կալիցիայէն եկան Պուքովինա արդէն ազգայնութիւննին կորուսած եւ բոլորովին լեհացած, ըստ մասին Չեռնովից եւ ըստ մասին Սէրէթ հաստատուեցան, ումանացի Պօյարներու կալուածները վարձեցին — որոնք աւելի սիրով Մոլտաւիա կը բնակէին<sup>176</sup> — ինչպէս նաեւ արեւելեան-յունական եկեղեցւոյ կալուածներն, եւ ինայութեամբ ու աչալըութեամբ ազարակներ մշակելով՝ ժամանակաւ նոյն տեղերու կալուածատէրն եղան<sup>177</sup> :

Այսպէս Պոկտան Ստեփան անուն հայ մը Սդանիսլաւէն Պուքովինա եկաւ եւ Փալատի ուման Պօյարէն՝ Օրըշէնի անուն կալուածը գնեց, եւ գնման դաշինքը կատարելու համար, ինք զինք պարտաւորեց գրաւորապէս 1781 Յունիս 8 ին՝ որ նոյն տեղը նոր գիւղ մը հաստատէ եւ սեպհական ծախիւք 50 գերմանացի ընտանիք հոն գաղթական բերէ: Բայց երբ նոյն տարւոյ Յուլիս 7 ին իւր գնումն պաշտօնապէս հաստատեցաւ, իւր պարտաւորութեան կատարումը մոռցաւ, թէ եւ այն շատ անգամ իրեն յիշեցուցաւ<sup>178</sup> :

Այս կաթողիկեայ եւ ի մասնաւորի Չեռնո-